

Սկսենք նրանից, որ սահմանապահներն այն մարդիկ են, որոնց շնորհիվ... Եթե շատ հեռուն չգնամ, ապա նրանց շնորհիվ եմ հիմա բազմոցին խաղաղ, անհոգ սրտով նստած ու ժպիտով գրում եմ այս նյութը:

Համոզված կարող եմ ասել, որ ռազմական և շատ այլ առումներով զարգացած այս աշխարհում խաղաղությունն ապահովողն, անշուշտ, զարգացած մարդն է երկրի վրա, մեր հայրենիքին խաղաղություն պարգևողը մեր սահմանապահն է:

Ամեն մեկս մեր ստեղծածի սահմանապահն ենք:

Զինվորը՝ երկրի, հայրն՝ իր օջախի, մայրն՝ իր տան... Չծիծաղեք, խնդրում եմ, բայց նույնիսկ կենդանիներն են սահմանապահ, մայր մեղուն՝ իր փեթակի, առաջնորդ թռչունը՝ իր երամի....

Սիրելի՛ ընթերցող, ես ու դու էլ ենք սահմանապահ, ամեն մեկս մեր տեսանկյունից:

Բայց եթե ես լինեի մեր երկրի սահմանապահը, ապա սահմանին կանգնել ու զենք բռնելուց առաջ այլ ճանապարհով հոգիս կամրապնդեի, որ ոգով ուժեղ լինեմ:

Լուսինե Առաքելյան